«ԲԱԶԵ – 2012»
Համահայկական երիտասարդական հավաք
ծրագիր

1. Ծրագրի էությունը

Կազմակերպել երիտասարդական հավաք, որի ընթացքում Հայաստանի, Արցախի և Ջավախքի և սփյուռքի 18-30 տարեկան երիտասարդներ միասին կանցկացնեն մարզական, մշակութային և այլ մրցություններով լի, ինչպես նաև՝ հետաքրքիր հանդիպումներով և ծանոթություններով հարուստ օրեր «Բազե» հավաքում:

Հավաքը կազմակերպում և անցկացնում է Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամը:

2. Ծրագրի նպատակները

«Բազե» հավաքում ստեղծել հատուկ բարեկամական և մրցակցային մթնոլորտ, որտեղ Հայաստանի և սփյուռքի տարբեր վայրերից ժամանած երիտասարդները հնարավորություն կստանան ծանոթանալու և շփվելու միմյանց հետ, մասնակցելու մշակութային և ինտելեկտուալ մրցույթների և մարզական խաղերի:

Հաշվի առնելով, որ բոլոր վայրերից հավաքված երիտասարդներն ընտրվելու են իրենց ընդունակությունների և հասարակական ակտիվության սկզբունքով, կարելի է համոզված լինել, որ հավաքից ստացած տպավորությունները, գիտելիքները, գաղափարները կկիսեն իրենց բնակավայրերի ընկերների հետ՝ դրանով երիտասարդության շրջանում հայրենիքի նկատմամբ մասամբ սերմանելով սեր ու ազգային գաղափարներ, ինչպես նաև հետագայում համագործակցության եզրեր կուրվագծվեն:

3. Հավաքի անցկացման տեղն ու ժամկետները

Հավաքը նախատեսվում է իրականացնել 2012 թվականի օգոստոսի 13-ից - 19-ն ընկած ժամանակահատվածում՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանը:

4. Մասնակիցները

Հավաքին մասնակցում են 18-ից 30 տարեկան շուրջ 294 երիտասարդ Հայաստանից, Արցախից, Ջավախքից և սփյուռքից:

Մասնակիցները բաժանվելու են երեք ճակատի՝ կարմիր, կապույտ և նարնջագույն, որոնք խորհրդանշում են Հայաստանի պետական դրոշի գույները:

1. ՀՀ մարզեր – 10 ջոկատ – 70 մասնակից
2. Երևան – 1 ջոկատ – 7 մասնակից
3. ԲՈՒՀ-եր – 17- ջոկատ -119 մասնակից
4. Ոչ պետ. ԲՈՒՀ-եր – 3- ջոկատ -21 մասնակից
5. ԼՂՀ – 1 ջոկատ – 7 մասնակից
6. Ջավախք – 1 ջոկատ – 7 մասնակից
7. Սփյուռք-2 ջոկատ – 14 մասնակից
8. Ազգային փոքրամասնություններ – 1 ջոկատ - 7 մասնակից
9. Սահմանափակ կարողությունների տեր անձինք – 1 ջոկատ - 7 մասնակից
10. Հայ առաքելական եկեղեցու ճեմարանի սաներ – 1 ջոկատ - 7 մասնակից
11. Հայաստանի ոստիկանական ակադեմիա – 1 ջոկատ – 7
12. Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ – 1 ջոկատ - 7 մասնակից
13. Սկաուտներ – 1 ջոկատ – 7 մասնակից
14. Քոլեջներ – 1 ջոկատ – 7 - մասնակից :

Ընդհանուր 42 ջոկատ

Ջոկատի կազմը՝ 7 մասնակից (առնվազն 3 աղջիկ), ներառյալ ջոկատի ղեկավարը:

«Բազե-2012» համահայկական երիտասարդական հավաքի կազմում չեն կարող ընդգրկվել նախորդ հավաքների և փառատոների մասնակիցները:

5. Հավաքի ղեկավար մարմինը

Հավաքն ունի իր համակարգող-ղեկավար մարմինը՝ տնօրեն, տնօրենի օգնական, գեղարվեստական / 4 անձ/, մարզական / 4 անձ/ խմբերի ղեկավարներ, անվտանգության ծառայության պետ, տնտեսական հարցերի պատասխանատու, շտաբի պետ, շտաբի պետի տեղակալ և լրատվության պատասխանատու, երեք ճակատի տնօրեններ:

Համակարգող-ղեկավար մարմնին կից գործում է նաեւ վարչական աշխատակազմ՝ շտաբի անձնակազմ /10 անձ/, մրցավարներ /4 անձ/, ճակատի տնօրենների օգնականներ /3 անձ/ և անվտանգության աշխատակիցներ /10 անձ/:

Յուրաքանչյուր ճակատ իր հերթին ունի ղեկավար մարմին, որի կազմում են ճակատի տնօրենը, ճակատի տնօրենի օգնականը, գեղարվեստական ու մարզական ղեկավարները և ջոկատների ղեկավարները:

Հավաքի ծրագիրը

<u>Օգոստոսի 13</u>

Մասնակիցների ժամանում և տեղաբաշխում «Բազե» ճամբարում, բացման հանդիսավոր արարողություն

<u>Օգոստոսի 13– 17</u>

Մրցութային միջոցառումներ և ժամանց

<u>Օգոստոսի 18</u>

Եզրափակիչ օրը «Բազե» ճամբարում, հավաքի փակում

<u>Օգոստոսի 19</u>

Մասնակիցների մեկնում:

Հավաքի ծրագիրը

Ծրագրի բաղկացուցիչ մասեր.

1. ինտելեկտուալ խաղեր -«բրեյն ռինգ» այս մրցույթի ընթացքում մեծ տեղ կտրվի Հայաստանի պատմությունը, ականավոր գործիչների մասին գործերի հրապարակային դարձնելը:
2. սպորտային - ա/ սպորտլանդիա, բ/ վոլեյբոլ , գ/ շախմատ , դ/ սեղանի թենիս, ե/ մինի ֆուտբոլ, զ/ պարանի ձգում, է/ լող և ը/ ձեռքի ուժ : Այս միջոցառումներ կնպաստեն թիմային հոգեբանության ձևավորմանը, միասնական ուժ լինելու կարևորությունը
3. մշակույթային – ա/ <<Բազե >> երգ /երգի մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է իր ցանկությամբ պատրաստի մեկ երգ, բ/ <<Բազե>> պար, գ/ <<Բազե>> նորաձևություն, դ/ <<Բազե>> նկարչություն: Այս մրցույթները կնպաստեն երիտասարդ տաղանդների բացահայտմանը:
4. հանդիպումներ – սա հնարավորություն կտա շփվել Եկեղեցու ներկայացուցիչների հետ, ՀՀ քաղաքական , մշակութային և այլ գործիչների հետ:
5. «Բանալի» արշավ – այս միջոցառումն իրականացվում է ճակատների միջև հատուկ նախապես մշակված քարտեզով՝ ամեն հաջորդ նշանակետին հասնելով լուծելով նախապես տրված գլուխկոտրուկները և այլ համապատասխան առաջադրանքներ: Այս միջոցառումը թիմային աշխատանք է, որը համախմբվածության և արագ կողմնորոշվելու արդյունքում կբերի հաղթանակի:

6 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՍՏՈՒԳԱՐՔԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

		ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ	ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ
1	ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 1.1 ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ 1.2 ՇԱԽՄԱՏ 1.3 ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ 1.4 ՊԱՐԱՆԻ ՁԳՈՒՄ 1.5 ՎՈԼԵՅԲՈԼ 1.6 ՁԵՌՔԻ ՈՒԺ 1.7 ՖՈՒՏԲՈԼ 1.8 ԼՈՂ 1.9 ԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԵՐ	 1 մասնակից 1 մասնակից 14 մասնակից 6 մասնակից 14 մասնակից 1 մասնակից 14 մասնակից 1 մասնակից 14 մասնակից	 ջոկատների և ճակատների ջոկատների և ճակատների Ճակատների միջև Ջոկատների և ճակատների միջև Ճակատների միջև Ջոկատների և ճակատների միջև Ճակատների միջև Ճակատների միջև Ճակատների միջև
2	ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ 2.1 ԲԱԶԵ-ԵՐԳ 2.2 ԲԱԶԵ-ՊԱՐ 2.3 ԲԱԶԵ – ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ 2.4 ԲԱԶԵ – ՆԿԱՐԻՉ	 1 մասնակից 1 մասնակից 5 մասնակից 1 մասնակից	 Ջոկատների և ճակատների միջև Ջոկատների և ճակատների միջև Ճակատների միջև Ջոկատների և ճակատների միջև
3	ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԵՐ 3.1 ԲՐԵՅՆ ՌԻՆԳ 3.2 ԲԱԶԵ - ԲԱՆԱԼԻ	 4 մասնակից 14 մասնակից	 Ջոկատների և ճակատների միջև Ճակատների միջև

Ազատ ժամանցային միջոցառումներ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	ԿԱՐԱՈԿԵ
2	ԱՄԵՆՕՐՅԱ ՀԱՄԵՐԳ-ԴԻՍԿՈՏԵԿ
3	ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ծրագրում հնարավոր են որոշ փոփոխություններ, որոնց մասին նախապես կտեղեկացվի:

«ԲԱԶԵ»-ի խորհրդանիշները

«Բազե» համահայկական երիտասարդական հավաքն ունի իր դրոշը, խորհրդանիշը և հիմնը: Մինչև հավաքի սկիզբը բոլոր մասնակիցները (ներառյալ ջոկատների ղեկավարները և հավաքի ղեկավարությունը) պարտավոր են իմանալ հիմնի բառերը:

Բոլոր ճակատներում բարձրացված են «Բազե»-ի և տվյալ ճակատի գունային դրոշները (կարմիր, կապույտ, նարնջագույն): «Բազե»-ի կենտրոնական շտաբում բարձրացված են Հայաստանի Հանրապետության պետական դրոշը և «Բազե»-ի դրոշը:

Յուրաքանչյուր մասնակցին կտրվի իր ճակատի գույնին համապատասխան շապիկ և գլխարկ:

Հավելված 1

«ԲԱԶԵ – 2012»
Համահայկական երիտասարդական հավաքի մասնակիցների ընտրման կարգ

2012 թ. Օգոստոսի 13-ից 19-ը Ծաղկաձորում անց է կացվելու «ԲԱԶԵ - 2012» երիտասարդական հավաքը: Հավաքին մասնակցող ջոկատները ներկայացնելու են ՀՀ մարզերը, բուհերը, Արցախը, Ջավախքը և սփյուռքը: Բոլոր ջոկատները բաժանված են 3 ճակատների՝ կարմիր, կապույտ և նարնջագույն:

Յուրաքանչյուր ջոկատ բաղկացած է 7 մասնակցից, այդ թվում՝ համապատասխան մարզային ջոկատի ղեկավարը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի մարզային երիտասարդական կենտրոնի աշխատակիցն է կամ հիմնադրամի կողմից առաջադրված թեկնածուն: Ջոկատի կազմում պետք է ընդգրկված լինի առնվազն 3 աղջիկ: Մասնակիցների տարիքը 18-30 տարեկանն է:

Հավաքի ընթացքում անց են կացվելու մարզական, մշակութային և ինտելեկտուալ մրցույթներ, որոնք գնահատվելու են, և արդյունքում որոշվելու են հաղթող ջոկատները, իսկ հետագայում՝ ճակատը: Մասնակից երիտասարդները պետք է լինեն տվյալ բնագավառներում ամենավառ ներկայացուցիչները, որպեսզի կարողանան լավագույնս ներկայացնել իրենց ջոկատը համահայկական հավաքում:

Մարզերում մասնակիցների ընտրությունը պետք է կատարվի մարզպետարանի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի մարզային երիտասարդական կենտրոնների հետ համատեղ կազմակերպված մշակութային, ինտելեկտուալ և մարզական մրցույթների հաղթողներից:

«Բազե-2012» երիտասարդական հավաքի կազմում չեն կարող ընդգրկվել նախորդ հավաքների և փառատոների մասնակիցները:

Տրանսպորտային ծախսերը մարզկենտրոնից մինչև Ծաղկաձոր և հակառակ ուղղությամբ ապահովում է համապատասխան մարզը:

Հավաքի կազմակերպման տեղային տրանսպորտի, մարզական, մշակութային միջոցառումների, մրցույթների, բազմատեսակ մրցանակների և համերգային ծրագրի ծախսերը հոգում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամը:

Խնդրում ենք հավաստել Ձեր մասնակցությունը և *մինչև 2012 թ-ի հուլիսի 20 -ը* կազմկոմիտե ուղարկել լրացված հավելված 2-ը (յուրաքանչյուր մասնակցի համար՝ 3x4 ճափսի երկու լուսանկար) և հավելված 3-ը :

Հավաքի տնօրեն՝ Հ.Գաբրիելյան

Հավելված 2

"ԲԱՋԵ - 2012"
Համահայկական երիտասարդական հավաք

լուսա նկար 3 X 4 2 հատ

Մասնակցության հայտ N^0 ____

_____
անունը, ազգանունը, հայրանունը

_____
ջոկատը

_____
ճակատը

1. _____
Ծննդյան վայր, տարեթիվ, ամսաթիվ

2. Անձնագիր N _____, տրված _____

3. _____
հասցեն, հեռախոսահամարը

4. _____
էլեկտրոնային հասցեն

5. _____
աշխատանքի (ուսման) վայրը

6. _____
ինչ մրցույթի եք պատրաստվում մասնակցել

Անձնական տվյալներ

1. _____ 2. _____
հասակը քաշը

3. _____
արյան խումբը

_____ _____
ստորագրությունը ամսաթիվը

Հայտի հետ պարտադիր ներկայացնել անձնագրի պատճենը:

Հայտերն ընդունվում են մինչև 2012 թ. հուլիսի 20-ը:

Մեկ էլեկտրոնային լուսանկար:

Հավելված 3

«ԲԱՁԵ - 2012»
Համահայկական երիտասարդական հավաք
ջոկատի կազմը ներկայացնելու
օ ր ի ն ա կ
«Երևանի պետական համալսարան» ջոկատ

1. Սարգիս Սարգսյան – (ղեկավար) ֆուտբոլ, Բրեյն- ռինգ,
2. Ռաֆայել Պողոսյան –բազկամարտ, Բրեյն- ռինգ,
3. Ռուբեն Սահակյան - շախմատ, Ձեռքի ուժ,
4. Կարինե Հակոբյան - Բազե նկարիչ, լող
5. Արմինե Սիմոնյան - վոլեյբոլ, Բրեյն- ռինգ,
6. Ռուզաննա Կիրակոսյան - պարի մրցույթ, երգի մրցույթ,
7. Կարինե Մկրտչյան - սեղանի թենիս, Բրեյն- ռինգ,

Ընդամենը՝ 3տղա, 3աղջիկ և ջոկատի ղեկավար

Ջոկատի ղեկավար _____ Ամսաթիվ_ _____

ստորագրություն

Ջոկատի ղեկավարի հեռ. համարը _____

Հավելված 4

«ԲԱԶԵ - 2012»

Համահայկական երիտասարդական հավաքին
մասնակցող ջոկատների կազմի ձևավորման կարգը

- Ջոկատը բաղկացած է 7 մասնակցից, այդ թվում՝ ջոկատի ղեկավարը:
- Ջոկատի աղամների տարիքը՝ 18-ից 30 տարեկան:
- Ջոկատում պետք է ընդգրկված լինի առնվազն 3 աղջիկ:
- Ջոկատի յուրաքանչյուր անդամ պետք է անպայման հայտավորված լինի ստուգարքային մրցույթներից առնվազն մեկում:
- Ջոկատի անդամը կարող է միաժամանակ հայտավորված լինել մի քանի ստուգարքային մրցույթում:
- Ջոկատը պետք է հայտավորի իր մասնակցությունը առնվազն 1 մարզական և 1 մշակութային մրցույթում:
- Ջոկատի կազմում չպետք է լինի ոչ մի մասնակից, որը չի մասնակցում ստուգարքային մրցույթներից և ոչ մեկին:
- Ջոկատի ղեկավարը նույնպես պետք է մասնակցի մրցույթներից որևէ մեկին:

Մրցույթներին մասնակցողների քանակը մեկ ջոկատից հետևյալն է՝

1.1. Սեղանի թենիս - 1 մասնակից
1.2. Շախմատ - 1 մասնակից
1.3. Պարանի ձգում – 6 մասնակից
1.4. Երգիչ (երգչուհի) - 1 կատարում
1.5. Պարող (պարուհի) - 1 կատարում
1.6. «Բրեյն Ռինգ» - 4 մասնակից
1.7. «Բազե նկարչություն» - 1 մասնակից
1.8. «Ձեռքի ուժ» - 1 մասնակից
1.9. «Լող» - 1 մասնակից

Ֆուտբոլ, Վոլեյբոլ, Ազգային խաղեր, «Բազե նորաձևություն», «Բազե բանալի» «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ» մրցույթներն անց են կացվելու միայն ճակատների միջև:

Հավելված 5

«ԲԱԶԵ - 2012»
Համահայկական երիտասարդական հավաքում
բնակվելու պայմանները

«Բազե» հավաքը տեղակայվելու է Ծաղկաձոր քաղաքում:
Հավաքի մասնակիցներն ապահովվում են օրական երեք անգամ սնունդով:
Հավաքի տարածքում կան բուժկետ, հեռախոս, բար և դիսկոտեկ:
Բարից և հեռախոսից մասնակիցներն օգտվում են իրենց հաշվին:
Համարներն ու սենյակները, որոնցում ապրելու են մասնակիցները, ապահովված են տաք ջրով:
Հավաքի ճաշարանը գործում է միայն «Բազե»-ի օրվա ռեժիմով նախատեսված ժամերին:
Օրվա ռեժիմը

08.30	Վերկաց
09.00-10.00	Նախաճաշ
10.15-10.30	Ճակատների, ջոկատների ղեկավարների հավաք
10.30-14.00	Պլանային միջոցառումներ և մրցույթներ
14.00-15.00	Ճաշ
15.00-20.00	Պլանային միջոցառումներ և մրցույթներ
20.00-21.00	Ընթրիք
21.00-23.30	Ազատ ժամանց, ոչ ստուգարքային մրցույթներ
00.00	Քուն

Հավաքի մասնակիցները պարտավոր են.

- պահպանել օրվա ռեժիմը,
- խնամքով օգտագործել առողջարանի գույքը,
- ճամբարի ողջ տարածքում պահպանել մաքրություն,
- հարգանքով վերաբերվել առողջարանի աշխատակիցներին,
- քնի ժամերին չաղմկել և չխանգարել մյուս մասնակիցների հանգիստը
- Հավաքի ընթացքում մասնակիցներին խստիվ արգելվում է լքել ճամբարի տարածքը և հյուրեր ընդունել:
- Ճամբարի տարածքում կտրականապես արգելվում է ոգելից խմիչքների վաճառքը և օգտագործումը :

Այն մասնակիցները, ովքեր չեն պահպանի սույն կանոնները, անմիջապես կհեռացվեն ճամբարից:

Հավաքի տնօրեն՝ Հովհ. Գաբրիելյան

Հավելված 6

«ՔԱՋԵ - 2012»
Համահայկական երիտասարդական հավաքի մասնակիցներին
Ի գիտություն

Մասնակիցը պետք է ունենա՝

- անձնական հիգիենայի պարագաներ (ատամի խոզանակ, ատամի մածուկ, օճառ, սրբիչ և այլ անհրաժեշտ իրեր),
- մարզական հագուստ (սպորտային մրցույթներին մասնակցելու համար),
- ցանկության դեպքում հեռախոսի քարտեր տեղի տաքսոֆոնից օգտվելու համար,
- անձնական դրամ (ցանկության դեպքում բարից օգտվելու համար) :

Նախապատվելի հագուստը՝

Ջինս (շորթ), վերնաշապիկ (շապիկ), բաճկոն, մարզական կոշիկներ :

«ԲԱԶԵ - 2012»
Համահայկական երիտասարդական հավաք

ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խաղի կանոնները խախտելու դեպքում մասնակիցը հեռանում է խաղից:
2. Մրցույթներին պարտադիր կերպով ներկայանալ սթափ վիճակում, այլապես ճակատը զրկվում է տվյալ մրցույթին մասնակցելու իրավունքից:
3. Մրցույթների ժամանակ խիստ արգելվում են հուշման բոլոր ձևերը, հակառակ դեպքում հուշողի ճակատի ներկայացուցիչը զրկվում է տվյալ խաղը շարունակելու իրավունքից:
4. Մրցույթի մասնակցի (մասնակիցների) ուշացման դեպքում այդ անձը (անձերը) զրկվում է տվյալ խաղին մասնակցելու իրավունքից:
5. Ժամանակին հայտերը չներկայացնելու դեպքում, ինչպես նաև վերը նշված կետերին չհետևելու դեպքում, խաղին մասնակցելու իրավունքից զրկվելուց բացի, ճակատների ղեկավարների ամենօրյա հավաքի ժամանակ ընդհանուր համաձայնությամբ կարգը խախտողի ճակատը կզրկվի ձեռք բերված միավորների որոշակի քանակությունից:

Ճակատի ղեկավար՝ ----------

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն
Ք. Երևան 0001, Աբովյան 50/5
հեռ. (+374 10) 54 58 02/03
E-mail: bazehavaq2012@gmail.com
URL: www.heh.am

«Բազե 2012» համահայկական երիտասարդական հավաքի մարզական մրցաշարերի անցկացման կարգը՝

ՇԱԽՄԱՏ.

Շախմատի մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոնակարգի համաձայն:

Ներճակատային մրցումների 1-ին և 2-րդ փուլերը կանցկացվեն օլիմպիական համակարգով /պայքարը շարունակում են միայն հաղթողները/, իսկ 3-րդ փուլը երեք ուժեղագույնների միջև կանցկացվի շրջանաձև համակարգով՝ երկու խաղափուլով: Խաղի տևողությունն է 15 րոպե մինչև պարտիայի ավարտը:

Միջճակատային մրցումները կանցկացվեն թիմային պայքարում /յուրաքանչյուր թիմում 3 մասնակից/, շրջանաձև համակարգով:

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ.

Սեղանի թենիսի մրցաշարը կանցկացվի Սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգին համաձայն:

Ներճակատային մրցումները կանցկացվեն օլիմպիական համակարգով /պայքարը շարունակում են միայն հաղթողները/:

Միջճակատային մրցումները կանցկացվեն թիմային պայքարում /յուրաքանչյուր թիմում 3 մասնակից/, շրջանաձև համակարգով:

ԲԱԶԿԱՄԱՐՏ.

Բազկամարտի մրցաշարը կանցկացվի Բազկամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգին համաձայն: Մրցելու են աջ ձեռքով, առանց քաշային կարգերի:

Ներճակատային մրցումները կանցկացվեն օլիմպիական համակարգով /պայքարը շարունակում են միայն հաղթողները/:

Միջճակատային մրցումները կանցկացվեն թիմային պայքարում /յուրաքանչյուր թիմում 3 մասնակից/, շրջանաձև համակարգով:

ՖՈՒՏԲՈԼ

Խաղերն անցկացվում են միջճակատային յուրաքանչյուր ճակատից մեկ թիմ:

Թիմում ընդգրկվում են յուրաքանչյուր ջոկատից մեկ ներկայացուցիչ, թիմի կազմը առավելագույնը 14 մարդ /1+5 խաղացող/: Այն ջոկատները որոնք կներկայացնեն ոչ բավարար խաղային որակ ցուցաբերող մասնակիցներ կգրկվեն մեկ միավորից:

Խաղը բաղկացած է 2 խաղակեսից, յուրաքանչյուրը 20 րոպե տևողությամբ, ընդմիջումը 5 րոպե: Մրցաշարի խաղերն անցկացվում են շրջանաձև եղանակով մեկ շրջանից:

ՎՈԼԵՅԲՈԼ

Խաղերն անցկացվում են միջճակատային յուրաքանչյուր ճակատից մեկ թիմ:

Թիմում ընդգրկվում են յուրաքանչյուր ջոկատից մեկ ներկայացուցիչ, թիմի կազմը առավելագույնը 14 մարդ: Այն ջոկատները որոնք կներկայացնեն ոչ բավարար խաղային որակ ցուցաբերող մասնակիցներ կգրկվեն մեկ միավորից:Խաղերը բաղկացած են երեք խաղափուլից, խաղափուլի տևողությունը մինչև 25 միավոր: Մրցաշարի խաղերն անցկացվում են շրջանաձև եղանակով մեկ շրջանից:

ԼՈՂ

Լողի մրցաշարը կանցկացվի Լողի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգին համաձայն: Մրցելու են 50 մետր ազատ ոճ լողատարածությունում:

Ներճակատային մրցումները կանցկացվեն օլիմպիական համակարգով /պայքարը շարունակում են միայն լավագույն արդյունքներ ցուցաբերած 4 մասնակիցները/:

Միջճակատային մրցումները կանցկացվեն թիմային պայքարում /յուրաքանչյուր թիմում 4 մասնակից/, 4*50 մետր ազատ ոճ փախանցալող:

Սպորտային մրցաշարերում.

Նշված մրցաշարերում տղաները և աղջիկները մրցելու են միասին:

1-ին տեղը զբաղեցրած ջոկատները կամ ճակատը վաստակում է 3 միավոր

2-րդ տեղը զբաղեցրած ջոկատները կամ ճակատը վաստակում է 2 միավոր

3-րդ տեղը զբաղեցրած ջոկատները կամ ճակատը վաստակում է 1 միավոր

Պարանի ձգման մրցաշարի, ազգային խաղերի և սպորտլանդիայի վերաբերյալ մանրամասներ կտրամադրվի տեղում: